

Յունուար 28, 1979

Գ Ր Ր Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Յ Ա Ն

ՍՐՐՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԱՄԵՆՕՐԵԱՅ ՀԱՅ ԴՊՐՈՑԻ

Մեզի համար իսկապէս ուրախութեան առիթ մը եղաւ, երբ հայեցի կըրթութեան հաւատաւոր խումբ մը պատուական անձերու ցուցաբերած կորովին ու ջանասիրութեան շնորհիւ կարելի եղաւ ամենօրեայ հայ դպրոցով մը օժտել Պէյսայտի Սրբոց Նահատակաց Հայաստանեայց Եկեղեցւոյ մեր ընդարձակ եւ կազմակերպուած համայնքը՝ շուրջ երեք տարի առաջ:

Այդ գեղեցիկ իրագործումով անգամ մը եւս կը հաստատուէր այն իրողութիւնը, թէ հայ դպրոցն ու հայ ընտանիքը ազգային զգացումով եւ նսխանձանդորութեան ոգիով ներշնչուած, ամէն խոչընդոտ նուաճելով՝ պիտի կարենային մեր երկսեռ մանուկները դաստիարակել հայաշունչ մթնոլորտի մէջ:

Արդարեւ, եկեղեցւոյ շրջապատէն ներսն ու դուրսը գտնուող ժողովուրդին կողմէ հայ դպրոցին հանդէպ յայտնուած բոլորն ինտաքրորութիւնը վսեմ պարտականութիւն մը կը դնէ Խնամակալութեան վրայ՝ յամառ յարատեւութեամբ շարունակելու որակաւոր դաստիարակութեան պատուաբեր գործը:

Կստահ ենք որ ծանր պատասխանատուութիւնը ստանձնած հոգիներ խորապէս համոզուած են, թէ նիւ Եորք քաղաքի հանրային դպրոցներու կրթական ծրագիրին բոլոր պահանջները լրացնելով հանդերձ, հայ դպրոցը կրնայ հայերէն լեզուի եւ ազգային պատմութեան գիտութիւնը զարգացնել ո՞հսման ծարաւ աշակերտներուն մէջ, անոնց հրամցնելով նաեւ հայ երգի ու պարի համելի յայտագիրներ:

Այս յոյժ կենսական առարկաներու ուսուցման գուզընթաց, խնամակալութիւնը եւ ընտանիքները դեռ պիտի հարկադրուէին տեղական պայմաններէն օգուելէ գառ, այլ կերպերով նիւթական միջոցներ ապահովել դպրոցի տեւականացման համար:

Մանկավարժական արդիական մեթոտով ցարդ կատարուած կրթական աշխոյժ աշխատանքին համար կը յայտնենք մեր գոհունակութիւնը, եւ հայրական սիրով կ'օրհնենք ծխական խորհուրդի եւ խնամակալութեան անդամները, ուսուցչական կազմը եւ ուսանողները:

Սիրոյ ողջունիւ  
ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ